2021, № 1, 73-84 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.1.073

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՉԻՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ

«Փափուկ ուժի» չինական ժամանակակից մեկնաբանության մեջ կարևոր տեղ են գրավում միջազգային ասպարեզում ներդաշնակ աշխարհի և հասարակության հիմնախնդիրները: Մշակույթի փափուկ ուժի հայեցակարգը որոշակի հիմք ստեղծեց չինական պաշտոնական դիսկուրսում դեռևս 2004 թվականից գոյություն ունեցող կարգախոսների համար՝ երկրի ներսում «ներդաշնակ հասարակություն», ինչպես նաև նրա սահմաններից դուրս «ներդաշնակ աշխարհ» ստեղծելու վերաբերյալ: «Ներդաշնակ աշխարհի», բարգավաճման, զարգացման, արդարության, անվտանգության, հանդուրժողականության, բազմազանության ու փոխադարձ հարգանքի գաղափարների քարոզչության աղբյուրը չինական ավանդական ժառանգությունն էր, առաջին հերթին՝ ներդաշնակության կոնֆուցիական մեկնաբանությունը:

«Ներդաշնակության» չինական իդեալները հենվում են կոնֆուցիական բարոյագիտության և հասարակության մասին ուսմունքի վրա, որոնք կոչված են արդի պայմաններում նվազեցնելու սոցիալական կոնֆլիկտների լարվածությունը: Նախնիների իմաստնությանը դիմելու նպատակն էր շեշտել, որ ներկայումս հռչակվող խաղաղության ու զարգացման կարգախոսները հենվում են չինական քաղաքակրթության հնավանդ արժեքների վրա, ուստի դրանց հարկ է վերաբերվել որպես երկարաժամկետ ու հաստատուն ուղենիշների չինական քաղաքականության մեջ:

Ներդաշնակության գաղափարը վերածվում է քաղաքական արժեքների կարևոր բաղադրիչի և ուղենիշի արտաքին քաղաքականության մեջ: Այդ գաղափարի օգտագործումը բացում է երկու խնդրի լուծման ճանապարհ: Նախ և առաջ՝ ներդաշնակության կարգախոսների հիման վրա ձևավորվում է քննադատության ենթարկվող ազատական արժեքների բացարձակացման և դրանք այլ երկրների պարտադրելու արևմտյան ռազմավարության չինական հակակշիռը: Չինական ղեկավարության առաջարկած «ներդաշնակ աշխարհը» ընդգծում է մշակույթների, արժեքների և զարգացման մոդելների բազմազանությունը:

Երկրորդ՝ դա օգնում է բարելավելու հենց Չինաստանի իմիջը, որն արտերկրում բախվում է անվստահության ու կշտամբանքների այն հարցով, որ այդ երկրի գործողությունների միակ շարժառիթը միջազ-

գային ասպարեզում առավելագույն շահույթ ստանալն է: Ներդաշնակության իդեալների և դրանք սնող բազմադարյա մշակութային ավանդույթների քարոզչությունը ցույց է տալիս, որ Չինաստանը ձգտում է ոչ միայն տնտեսական շահույթի և ռազմական անվտանգության, այլև արտաքին աշխարհ է ներմուծում իր դրական իդեալները պարտքի, արդարության, բարոյականության ու պատասխանատվության մասին:

Պրոֆեսոր Մեն Խունխուան նշում է, որ ներդաշնակության գաղափարը հանդես է գալիս որպես «չինական «փափուկ ուժի» առաջխաղացման առանցքային եզրույթ, որը պարզորոշ ի ցույց է դնում Չինաստանի ռազմավարական ուղղվածությունը»[1]: Հետազոտողի կարծիքով, Հու Ցզինտաոյի կառավարման շրջանում «ներդաշնակության փիլիսոփայությունը» դարձավ ՉԿԿ ԿԿ-ի կոլեկտիվ ղեկավարման գաղափարը[2]: Նա ենթադրում է, որ Չինաստանի կողմից «ներդաշնակ աշխարհի», «ներդաշնակ Ասիայի» և «ներդաշնակ տարածաշրջանի» հայեցակարգն առաջադրելը ցույց է տալիս «ներդաշնակ հասարակություն» կառուցելու ներքաղաքական կարգախոսի և «ներդաշնակ աշխարհի» արտաքին ծրագրի փոխպայմանավորված լինելը: Մի կողմից՝ «ներդաշնակ աշխարհը» իդեալական պատկերացում է տալիս չինական միջազգային ռազմավարության մասին: Չինաստանը՝ որպես արագ զարգացող մեծ երկիր, պետք է մտածի ոչ միայն իր մասին, այլև ամբողջ աշխարհի՝ «համընդհանուր միասնության» հինավուրց ուտոպիստական իդեալի ոգով: Մյուս կողմից՝ ներդաշնակությունը Չինաստանի պարտավորությունն է ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում: Միջազգային ասպարեզում այդ պարտավորությունը փոխակերպվում է Չինաստանի «ռազմավարական ինքնասահմանափակման» «պատասխանատու մեծ պետության» դերում»[3]:

Չինաստանը ձգտում է իր համար ստեղծել «պատասխանատու մեծ պետության» կերպար, որը հանդես չի գալիս ընդդեմ համաշխարհային կարգի, այլ բարեփոխում և պաշտպանում է այն: Չինացի փորձագետները նշում են, որ նման կերպար ձևավորելը երկրի համար բարենպաստ արտաքին պայմաններ է ստեղծում, և դա ծառայում է ի նպաստ ներքին խնդիրների լուծման:

Ներդաշնակության նոր գաղափարախոսության, որը դառնում է ժամանակակից չինական «փափուկ ուժի» միջուկը, զարգացման մեջ կարևոր տեղ է գրավում Կոնֆուցիոսի թեզը՝ «միասնականացում առանց ունիֆիկացիայի»: Ժամանակակից քաղաքական համատեքստում այդ արտահայտությունը կարող է մեկնաբանվել որպես Չինաստանի ցանկություն՝ զարգացնելու համագործակցությունը Արևմուտքի

---

[1] **Men Honghua.** Zhongguo guannian biange de zhanlüye lujing (The Strategic Path of China's Conceptual Change) // Shijie jingji yu zhengzhi (World Economy and Politics). 2007. № 7. P. 14.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 19:

[3] Նույն տեղում, էջ 20:

հետ («միասնականություն»)՝ առանց անցում կատարելու Արևմուտքի դաշնակցի դիրքեր և ճանաչելու արևմտյան արժեքները («ունիֆիկացիա»):

«Չինաստանի խաղաղ վերելքը»[4] գրքի հեղինակներ, չինացի քաղաքագետներ Սյա Լիպինը և Ցզյան Սիյուանը ենթադրում են, որ արտաքին աշխարհի հետ հարաբերությունների չինական մոդելը կառուցվում է «փնտրել ընդհանուրը՝ պահպանելով տարբերությունները» ձգտման վրա: Արևմտյան մշակույթի պատմությունը, ընդհակառակը, ընդգծում է լոկ առճակատումային սկզբունքը՝ «ինչ որ սպիտակ չէ, այն սև է»: Վերոնշյալ հետազոտողները ենթադրում են, որ մշակութային ավանդույթով պայմանավորված՝ չինացիների մեջ տարածված են կոսմոպոլիտիզմն ու պացիֆիզմը, նրանց մեջ թույլ է ագրեսիվությունը, և բացասաբար են տրամադրված բռնության նկատմամբ. օտար ժողովուրդներն ի սկզբանե նրանց կողմից ընկալվում էին ոչ իբրև թշնամիներ, այլ օբյեկտներ՝ գրքերի և ծեսերի մասին գիտելիքներ տարածելու քաղաքակրթական առաքելության համար: Այդ համատեքստում չինական ավանդական խոնարհումը «չափավորության» և ներդաշնակության արժեքներին օպտիմալ միջոց է՝ լուծելու հակասությունները երկրների, ազգերի ու կրոնների միջև: Չինաստանի դիվանագիտությունը ձգտում է «չափավորության», ուստի այն չի ժխտում տարբերություններն ու հակասությունները, թույլ չի տալիս, որ կոնֆլիկտները հասնեն ծայրահեղ չափերի, օգնում է լուծելու կոնֆլիկտը, ջանքեր է գործադրում հասնելու ներդաշնակության ու հավասարակշռության: Չինացի ազգին հնուց ի վեր հատուկ է «բարեկամական մտածողությունը», այլ ժողովուրդների ու պետությունների հետ լավ հարաբերությունների ձգտումը:

Սյա Լիպինը և Ցզյան Սիյուանը եզրակացնում են, որ Չինաստանը պետք է ջանադրաբար քարոզի արտերկրում «միասնականացում առանց ունիֆիկացիայի» մոտեցումը: Չինական կառավարությունը այդ գաղափարն առաջ մղելու համար պետք է դիվանագիտության գործիքների օգնությամբ աջակցի «փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձևավորմանը, փոխադարձ փոխանակումներին, փոխադարձ փոխառություններին, արժանիքների ու թերությունների փոխադարձ մրցակցությանը, աշխարհում զանազան քաղաքակրթությունները, անհամատեղելի հասարակական համակարգերն ու զարգացման ուղիները համատեղ զարգացնելուն»[5]: Միաժամանակ խաղաղության, ներդաշնակության ու համագործակցության նկատմամբ հարգանք դրսևորելու չինական արժեքների քարոզչությունը կնպաստի արտասահմանում Չինաստանի միջազգային նոր կերպարի արմատավորմանը, ինչը «կօգնի ավելի դյուրընկալելի դարձնելու Չինաստանի վերելքը այլ երկրների ու

[4] Տե՛ս **Xia Liping, Jianxi Yuan.** Zhongguo hepin jueqi (China's Peaceful Rise). Beijing. 2004:

[5] Նույն տեղում, էջ 336:

համաշխարհային հանրության համար»[6]:

Մեկ այլ հետազոտող՝ Չժան Չժիչժոուն, հայտարարում է, որ «ներդաշնակ» չինական մշակույթը ոչ մի կերպ չի կարող «սպառնալիք»[7] լինել, քանի որ ցանկացած պետության մշակութային ավանդույթը ձևավորվում է նրա հասարակության մեջ իշխող արտադրական հարաբերությունների հիմքի վրա. ձևավորումից հետո մշակույթը ձեռք է բերում կայուն բնութագրեր: Դա, գիտնականի կարծիքով, մշակույթների ներկայիս բազմազանության հիմքն է: Քոչվորական քաղաքակրթության ստեղծման ձևը հեշտությամբ նպաստում է ռազմատենչությանն ու նվաճողականությանը. այդպես հայտնվեց Չինգիզ խանը: Ծովային քաղաքակրթությունը ուշադրություն է դարձնում առևտրի և վաճառականության իրավունքների նվաճմանը, ինչը հանգեցրեց Հոլանդիայի և Մեծ Բրիտանիայի գաղութատիրական քաղաքականությանը: Ագրարային քաղաքակրթությունը, պայմանավորված արտադրության ինքնաբավությամբ, ձևավորում է ներքին համախմբվածություն ու խաղաղասիրություն. Չինաստանը նման տիպի երկրի դասական օրինակ է:

Հենց դրա հիման վրա չինական մշակույթում զարգացան մարդու և Երկնքի միջև ներդաշնակության, մարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների, ներդաշնակությունը վեհացնելու սկզբունքները, «համընդհանուր սիրո» և «հարձակումների դատապարտման» գաղափարները, մարդասիրության, արդարության ու ծիսակրոնական բարեվայելչության նորմերը: Չինական ավանդական մշակույթը վերածննդի, այլ ոչ թե մոռացման միտումներ է դրսևորում, ինչը հանգում է չինական մշակույթի «փափուկ ուժի» «ներդաշնակ» էությունը ժառանգելուն և շարունակելուն: Նման մշակույթը սպառնալ չի կարող: Աշխարհում, որտեղ ղեկավարում է իշխանության ու շահի համար պայքարի արևմտյան դիվանագիտական փիլիսոփայությունը, չինական մշակույթի «փափուկ ուժի» աճը չի կարող դառնալ «սպառնալիք» այլ պետությունների ու ժողովուրդների համար: Ընդհակառակը՝ դա «բարի լուր» է բոլոր երկրների ու բոլոր ժողովուրդների համար[8]:

Հարավկորեացի հետազոտողները նշում են, որ չինական մշակույթը ի զորու է դուրս բերելու Չինաստանին իշխող դիրքեր այսպես կոչված «ասիական արժեքները»[9] նորովի սահմանելիս: Չինաստանի վերելքը հնարավորություն է ստեղծում չինական մշակույթի հիման վրա «ասիական արժեքներ» որոնելու համար: Հեղինակները նշում են, որ

---

[6] Նույն տեղում:

[7] Տե՛ս **Zhang Zhizhou.** Hanyu re bu dengyu "Zhongguo ruan qianli weixie" (Passion for Chinese does not mean "China's soft power threat") // Zhongguo yu shijie guancha (China and the World Watch). 2006, № 3, էջ 196:

[8] Տե՛ս նույն տեղը:

[9] Տե՛ս **Young Nam Cho, Jong Ho Jeong**. Zhongguo de ruan shili: Taolun, ziyuan yu qianjing (China Soft Power: Discussion, Resources, and Prospects). // Yazhou yanjiu (Asia Survey). 2009, № 4, էջ 45:

չինական պատմությունն ու մշակույթը կարևոր ռեսուրս են ասիական նույնականությունն ու արժեքային հայեցակետերը կառուցակարգելիս: Ասիական երկրները, հատկապես Արևելյան Ասիայի, ծանոթ են կոնֆուցիականությանն ու կոնֆուցիական արժեքներին, որոնք, ինչպես մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը Արևմուտքում, ասիական տարածաշրջանում ձեռք են բերել «համընդհանուր արժեքների» կարգավիճակ: Կոնֆուցիական արժեքները պաշտոնական գաղափարախոսության մեջ ներմուծելու գործընթացը սկիզբ առավ Ցզյան Ցզեմինի օրոք և արագացավ Հու Ցզինտաոյի կառավարման ժամանակաշրջանում. մասնավորապես, կոնֆուցիականությունից վերամշակվեցին և ներառվեցին մի շարք գաղափարներ՝ մարդուն իբրև հիմք ընկալելը, ժողովրդին մոտ լինելը, ներդաշնակ հասարակությունը, սոցիալիստական հայացքը պատվաբերի ու ամոթալիի վերաբերյալ: Կոնֆուցիական միտքը մտավ նաև Չինաստանի դիվանագիտական գաղափարախոսության մեջ. չէ՞ որ «համատեղ բարգավաճումը», «ընդհանուր անվտանգությունը», «ներդաշնակ աշխարհը» սերում են կոնֆուցիականությունից, այլ ոչ թե մարքսիզմից կամ արևմտյան ռեալիզմից ու լիբերալիզմից:

Մյուս կողմից, մշակութային պահպանողականության ու ավանդականության հոսանքների սաստկացումը Չինաստանի ներքին կյանքում ոչ միանշանակ արձագանք է գտնում. այդ երևույթների մեջ կարելի է տեսնել ոչ միայն ազգային մշակույթի վերածննդի դրական դրսևորումներ ու վերադարձ ակունքներին, այլև ինքնամփոփության նոր սպառնալիք, երբ արևմտյան ազդեցությունից զերծ մնալու ձգտումը կարող է դառնալ խոչընդոտ արտաքին աշխարհում չինական մշակույթը տարածելու համար: Պրոֆեսոր Գո Ցզյաննինը նշում է, որ Կոնֆուցիոսի ու կոնֆուցիականության ամբողջ կարևորությամբ հանդերձ՝ ավանդական մշակույթի ու «փափուկ ուժի» միջև չի կարելի հավասարության նշան դնել[10]:

Մեկ այլ պրոֆեսոր՝ Խան Բաոցզյանը, կոչ է անում ուշադրություն դարձնել մշակույթի զարգացման երկու տագնապալի միտումներին: Առաջինը «հնության վերականգնումն է», երբ «ազգային ուսմունքի» ալիքով տարվելու պատրվակով մարդկանց կրկին հրամցնում են ավատատիրական գաղափարներ ու «մշակութային մղեղ»՝ քաոս առաջացնելով հասարակության գաղափարներում: Ավանդական մշակույթը հարկավոր է զարգացնել՝ վերցնելով դրանից գլխավորն ու դեն նետելով «մղեղը»: Երկրորդը «արևմտականացման» քարոզչությունն է, արևմտյան ժողովրդավարական համակարգով և ազատական աշխար-

[10] Տե՛ս **Guo Jianning.** Dandai Zhongguo de wenhua zijue – jin shinian wenhua jianshe zhanlüe gouxiang (Cultural Consciousness in Contemporary China – Strategic Conception of Cultural Construction in the Past Decade) // Zhongguo zixian (China Online) – http://www.chinadaily.com.cn/dfpd/17jlzqh/2011-10/14/content_13898588.htm

հայացքով կուրորեն տարվելը: Արդիականացման ու ժողովրդավարացման ճանապարհին Չինաստանը շատ բան ունի սովորելու Արևմուտքի զարգացած երկրներից, սակայն դա պետք է անել ընտրողաբար[11]: Այս տեսանկյունից չափից ավելի վերադարձը ավանդականությանը ոչ պակաս վտանգավոր է, քան կույր արևմտամետությունը:

Չինացի հետազոտողները չինական «փափուկ ուժի» առանձնահատկությունների վերաբերյալ բանավեճերում ելնում են այն բանից, որ համալիր ուժը մեծացնելու համար պետությունը պետք է զուգակցի «կոշտ» և «փափուկ» ուժերը: Փորձագետները հիշեցնում են, որ հիմքում «կոշտ ուժն» է, և առանց դրա «փափուկ ուժի» դերը կլինի չափազանց սահմանափակ: Սակայն այն բանից հետո, երբ տնտեսական, գիտատեխնիկական և ռազմական հզորության «կոշտ ուժը» զարգանա մինչև որոշակի աստիճան, «փափուկ ուժի» մշակութային գրավչության մեծացումը ազգային հզորության համար կարող է ստեղծել «բազմարկիչի» էֆեկտ՝ բազմապատկելով դրա ներուժը:

Չինական քննարկումների հիմքում ընկած է այն թեզը, որ, հաշվի առնելով «կոշտ ուժը» բացահայտորեն կիրառելու հնարավորության սահմանափակ լինելը, արդի աշխարհում երկրների մրցակցության մեջ առաջին տեղը գրավում է «փափուկ ուժը»: Քանի որ Չինաստանը հայտարարում է իր հավատարմությունը խաղաղության ու զարգացման իդեալներին, «փափուկ ուժի» ներուժի մեծացումը դիտվում է որպես մրցակիցների նկատմամբ առավելություն ձեռք բերելու հիմնական ռեսուրս: Հեռանկարում չինական մշակույթի ու արժեքային հայեցակետերի համաշխարհային ազդեցության մեծացումը կոչված է օգնելու երկրին դառնալ համաշխարհային հանրության առաջնորդ: Վիճելի է մնում այն հարցը, թե արդյոք հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միանգամից մի քանի առաջատար պետություններ տիրապետեն «փափուկ ուժի» բարձր ներուժի: Չինական քաղաքագետների մի մասը ենթադրում է, որ «փափուկ ուժերի» մրցակցությունը «զրոյական հանրագումարով խաղ է», որում հաղթում է միայն մասնակիցներից մեկը: Եվ դա նշանակում է, որ Չինաստանի ազդեցության աճը կուղեկցվի ԱՄՆ-ի գլխավորությամբ Արևմուտքի «փափուկ ուժի» մայրամուտով:

Չինացի գիտնականները բանավիճում են, թե ինչն է առաջնահերթ «փափուկ ուժի» հայեցակարգի ձևավորման ու զարգացման համար՝ «մշակույթի՞ փափուկ ուժը», թե՞ «քաղաքականության փափուկ ուժը»: Այս հարցում չինացի գիտնականների հայացքները կիսվեցին, և առաջացան չինական «փափուկ ուժի» երկու ուղղություններ՝ «մշակութային» և «քաղաքական»: Քաղաքական մեկնաբանությունը առաջարկեց

[11] Տե՛ս **Han Baojiang.** Shiqi jie liu Zhong qianhui: ba wenhua jianshe naru fazhan zongti guihua (The Sixth Plenary Session of the Seventeenth Central Committee: Incorporating Cultural Construction into the Overall Development Plan) // Souhu xinwen (Sohu News) – http://star.news.sohu.com/20111106/n324694699.shtml

հեղինակավոր գիտնական Յան Սյուետունը: Նրա կարծիքով, երկրի համալիր ուժը բաղկացած է «փափուկ» և «կոշտ» ուժերի համակցությունից, սակայն դա հանրագումար չէ, այլ երկու բաղադրատարրերի գոյակցում, ուստի «փափուկ» կամ «կոշտ» ուժի կորստյան դեպքում համախառն ազգային հզորությունը հավասարվում է զրոյի: Յան Սյուետունը «փափուկ ուժը» սահմանում է որպես «պետության քաղաքական համախմբման ունակություն ներսում և դրսում»[12]: Գիտնականը նշում է, որ նյութական բարեկեցության մակարդակը չի մեծացնում պետության քաղաքական համախմբման ունակությունը ներսում և դրսում: Ըստ նրա՝ 1970-1980-ական թթ. ՉԺՀ տնտեսությունը ավելի թույլ էր զարգացած, սակայն երկրի քաղաքական համախմբման հնարավորությունները միջազգային ասպարեզում ավելի մեծ էին, քան հիմա: «Փափուկ ուժի» նկատմամբ գլխավոր սպառնալիքը Յան Սյուետունը համարում է սոցիալական աններդաշնակությունը երկրի ներսում: Չինական բարեփոխումներին տրվող դրական գնահատականներն արտերկրում բարձրացնում են Չինաստանի կարգավիճակն ու համախմբման հնարավորությունները՝ խթանելով ավելի մեծ թվով երկրների ունկնդրելու նրա խորհուրդները: Հակառակը, երկրում սոցիալական արդարության խնդիրները սրվելիս միջազգային կերպարն ու մոբիլիզացիոն հնարավորությունները նվազում են:

Բանավիճելով «փափուկ ուժը» մշակույթին հավասարեցնելու փորձերի հետ՝ Յան Սյուետունը նկատում է, որ պատմության մեջ քիչ չեն զարգացած մշակույթով պետությունների փլուզման և կործանման նախադեպերը, օրինակ՝ Հռոմեական և Բրիտանական կայսրությունները, չինական վերջին կայսերական Ցին դինաստիան: Նրա կարծիքով, «ԽՍՀՄ-ի մշակութային ուժը 1991 թ. անհամեմատ մեծ էր, քան 1951 թ., սակայն մշակութային ուժի բազմապատկումը չօգնեց պահպանելու երկրի ամբողջականությունը»[13]: Արտերկրում մշակութային միջոցառումներ անցկացնելը օգնում է օտարերկրացիներին հասկանալու և ճանաչելու Չինաստանը, սակայն դա բնավ չի նշանակում, թե դրա շնորհիվ օտարերկրացիները կսիրեն Չինաստանը և կսկսեն պաշտպանել նրա քաղաքականությունը: Գիտնականը նշում է, որ օտարերկրացի փորձագետներից շատերը, որոնք հանդես են գալիս «չինական սպառնալիքի» դիրքերից, սիրում են չինական մշակույթը և լավ են արտահայտվում դրա մասին: Ուստի առաջնային պետք է լինի ոչ թե մշակույթը, այլ միջազգային ռազմավարական համբավի ամրապնդումը, որը պայմանավորում է այլ պետությունների դատողությունները չինական քաղաքականության հուսալիության մասին: Զուգահեռաբար՝

---

[12] **Yan Xuetong.** Zhongguo ruan shili youdai tigao (China's Soft Power Needs to be Improved) // Zhongguo yu shijie guancha (China and the World Watch). 2006. № 1. P. 5.

[13] **Yan Xuetong.** Ruan shili de hexin shi zhengzhi shili (The Core of Soft Power is Political Power) // Huanqiu shibao (Global Times). 2007. P. 42.

Չինաստանը պետք է լուծի ներքին խնդիրները և կառուցի «ներդաշնակ հասարակություն», քանի որ ներքին մոբիլիզացիոն կարողությունը երկրի արտաքին մոբիլիզացիոն ունակության հիմքն է:

Պրոֆեսոր Լու Գանը համաձայն չէ Յան Սյուետունի հետ և նշում է, որ ԽՍՀՄ փլուզման նախօրեին երկրի բարձր մշակութային հզորության մասին դատողությունները ճիշտ չեն[14]: Ընդհակառակը, 1951 թ. ԽՍՀՄ մշակութային ուժն ավելի բարձր էր, քան 1991 թ.: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ը ձեռք էր բերել գաղափարախոսական գրավչություն, հատկապես Չինաստանում: Նա նշում է, որ Չինաստանի մշակութային ուժի անկումը հանգեցրեց աշխարհում երկրի վատ կերպարի ձևավորմանը՝ պայմանավորված գործնական բարոյականության պակասով, հիմնական մարդկային արժեքների կորստով, շրջակա միջավայրի ու կենդանիների նկատմամբ հոգատարության բացակայությամբ: Այս տեսակետից հենց մշակույթն ու արժեքները կարող են ցույց տալ արտաքին աշխարհին, որ Չինաստանը սպառնալիք չէ և կարող է իր ավանդը ներդնել մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ: Չինական փորձագիտական հանրույթում երկար ժամանակ տիրապետող էր «փափուկ ուժի» մշակութային մեկնաբանությունը:

Ավանդույթների, ինստիտուցիոնալ ձևակարգերի և սոցիալ-քաղաքական մոդելների տարբերությունները ներազդում են «փափուկ ուժի» ամերիկյան և չինական ըմբռնումների վրա: Պրոֆեսոր Յան Շենպինը ընդգծում է, որ «փափուկ ուժը» հաճախ կարող է միջնորդավորված կամ անմիջականորեն վերածվել «կոշտ ուժի»: Ամերիկացի տեսաբան Ջ. Նայը քննարկում էր «փափուկ ուժը» միջազգային հարաբերությունների դիրքերից և ուղղակիորեն չէր կապում իրար «փափուկ ուժն» ու «կոշտ ուժը»: Սակայն Չինաստանում դրանք նման կերպ չեն հակադրում իրար, հակառակը՝ երկրի ներսում գոյություն ունի ձգտում փոխակերպելու «փափուկ ուժը» տնտեսական, քաղաքական և մշակութային ուժի: Յան Շենպինը խորհուրդ է տալիս չինացի հետազոտողներին ավելի մեծ ուշադրություն դարձնել «փափուկ» և «կոշտ» ուժերի փոխադարձ վերափոխմանը[15]:

Մեկ այլ հետազոտող՝ Ֆան Չանպինը, ևս ընդգծում է, որ ԱՄՆ-ն շեշտադրում է «փափուկ ուժի» անկախ բնույթը, մինչդեռ Չինաստանում հակված են ընդգծելու «փափուկ» և «կոշտ» ուժերի փոխկապվածությունը: Այդ միտումով է պայմանավորված չինական ձգտումը՝ տեսնելու «փափուկ ուժի» աղբյուրը «կոշտ ուժի» մեծացման մեջ: Բա-

---

[14] Տե՛ս **Lu Gang.** Wenhua shili ruo rang zhongguo shi fen (Weak Cultural Strength Makes China Lose Points) // Shiji xin (Line of the Century), էջ 45-46:

[15] Տե՛ս **Yang Shengping.** Zhongguo wenhua ruan shili tishen de san ge cengmian (Three Levels of the Improvement of Chinese Cultural Soft Power) // Shengbing shijie (World's Sound Screen) 2012, № 3, էջ 66:

ցի այդ, ԱՄՆ-ն շեշտում է իր «փափուկ ուժի» բացարձակ բնույթը՝ հարմար համարելով իր հասարակարգն ու քաղաքական արժեքները ամբողջ աշխարհի համար: Չինաստանը ցանկացած «փափուկ ուժ» համարում է հարաբերական (այդ թվում և իրենը)՝ շեշտելով բազմազանության սկզբունքը[16]: Սակայն եթե «կոշտ ուժը» ենթարկվում է պետական իշխանությանը, ապա «փափուկ ուժը» չի կարող ամբողջությամբ գտնվել կառավարության տրամադրության տակ: «Փափուկ ուժի» աճի ամերիկյան ռազմավարությանը մասնակցում են ինչպես իշխանությունները, այնպես էլ բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպություններ, որոնց դերը զանգվածային մշակույթը, գիտելիքները, արժեքներն ու կենսակերպը տարածելու գործում հաճախ գերազանցում է ԱՄՆ կառավարության դերը: Չինաստանում «փափուկ ուժի» առաջխաղացմամբ զբաղվում է իշխանությունը, իսկ ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությունը չնչին է: Ֆան Չանպինի կարծիքով, չինական այդ առանձնահատկությունը պայմանավորված է ոչ կառավարական կազմակերպությունների զարգացած չլինելով, ինչպես նաև պատմականորեն ձևավորված այն պատկերացմամբ, որ արտաքին աշխարհի հետ շփումները պետական կարևոր գործ են:

Ֆան Չանպինը ենթադրում էր, որ հարկավոր է մտորել նաև այն մասին, թե ինչպես միավորել «փափուկ ուժի» չինական ռեսուրսները համամարդկային արժեքների հետ՝ դրդելով աշխարհին ընդունելու չինական ավանդական մշակույթը, զարգացման մոդելն ու արտաքին քաղաքական նպատակները: «Չինաստանը պետք է չսահմանափակվի քաղաքական մակարդակում «փափուկ ուժի» կիրառմամբ հանուն այլ երկրների կողմից իր քաղաքականությանն աջակցելու: Պետք է նաև հայացքների ու մշակույթի մակարդակում կառուցակարգել չինական «փափուկ ուժը» որպես միջազգային հանրության հիմնական նորմ: Դա թեև շատ տևական գործընթաց է, բայց Չինաստանն իբրև զարգացող պատասխանատու խոշոր պետություն, իբրև հնագույն պատմություն և խորը մշակույթ ունեցող երկիր պետք է ունենա նման ձգտում»[17]:

Արդի փուլում Սի Ցզինպինի կառավարման տարիներին որոշակի փոխակերպման ենթարկվեց «փափուկ ուժ» ֆենոմենի հասկացությունը՝ պայմանավորված երկրի արտաքին քաղաքական ռազմավարության տեսական ու գործնական փոփոխություններով: ՉԺՀ նախագահը առաջարկեց «փափուկ ուժի» նոր տեսլական, որը տեսանելի ապագայում ազդեցություն կգործի երկրի քաղաքականության վրա ներսում և դրսում: ՉԿԿ տարբեր խմբակցությունների միջև ներքաղաքական պայ-

---

[16] Տե՛ս **Fang Changping.** Zhong Mei ruan shili bijiao ji qi dui Zhongguo de qishi (Comparison of China and America's Soft Power and Lessons for China) // Shijie jingji yu zhengzhi (World Economy and Politics). 2007, № 7, էջ 21–27:

[17] Նույն տեղում, էջ 27:

քարի և փոխզիջում որոնելու ընթացքում[18] փոխվում են պետությունը կառավարելու տեսությունն ու պրակտիկան. իշխանության կենտրոնացումը ՉԺՀ նախագահի ձեռքում, ԿՍԿՀ-ի (Կարգապահության ստուգման կենտրոնական հանձնաժողով) և դրա ղեկավարի լիազորությունների ընդլայնումը, հասարակության նկատմամբ կուսակցության վերահսկողության ուժեղացումը, «Մեկ գոտի, մեկ ուղի» նախաձեռնությունը:

2017 թ. հոկտեմբերին տեղի ունեցած կոմունիստական կուսակցության XIX համագումարում առանձնահատուկ ուշադրություն հրավիրվեց «փափուկ ուժի» հայեցակարգի մանրամասն քննարկման վրա՝ որպես երկրի արտաքին քաղաքական դոկտրինի մաս: Կուսակցության նախագահ Սի Ցզինպինը հաշվետու զեկույցում հատուկ առանձնացրեց «փափուկ ուժի» հայեցակարգի, դրա կիրառման, ինստիտուտների և գործիքների բազմամակարդակ զարգացման հարցերը: Զեկույցում «փափուկ ուժը» ավանդականի պես ներառվել էր մշակույթին ու գաղափարախոսությանը նվիրված բաժնում: Կուսակցության նախագահը շեշտեց չինական ավանդական մշակույթի կարևորությունը հասարակության զարգացման գործում և կոչ արեց պայքարել հանուն «չինական ազգի մեծ վերածննդի» մասին «չինական երազանքի» իրագործման. «Անցած տարիներին Չինաստանում ահռելի աշխատանք է կատարվել զանգվածային միջոցառումների իրականացման ոլորտում, շարունակել են ծաղկել գրականությունն ու արվեստը, անդադար բարելավվել է համացանցի զարգացումը, դրա կառավարումն ու կիրառումը... Այդ ամենը նպաստել է Չինաստանի «փափուկ ուժի» ներգործության և մշակույթի ազդեցության զգալի ուժեղացմանը, ավելի են ամրապնդվել գաղափարական համախմբվածությունը և կուսակցության ու հասարակության միասնությունը»[19]:

Սի Ցզինպինը առաջ քաշեց նոր հայեցակարգ, որը միավորում էր «մշակութային» ու «քաղաքական» ուղղությունները՝ վերջ դնելով գաղափարախոսական վեճերին: Սի Ցզինպինի հայեցակարգը՝ «զոցզյա վենխուա ժուան շիլի», կարելի թարգմանել որպես «պետական մշակութային փափուկ ուժ» կամ «մշակութային փափուկ ուժ պետության վերահսկողության ներքո»[20]: Քաղաքականությունն ու մշակույթը, որոնք ձևավորում են չինական «փափուկ ուժի» համընդհանուր հզորությունը, փոխլրացնում են իրար, որտեղ մշակույթը ներքին միջուկն է, իսկ քաղաքականությունը՝ մշակութային բովանդակության ցուցադրման գործիքը: Սի Ցզինպինի մոտեցմամբ՝ «փափուկ ուժի» հայեցակարգին

---

[18] Տե՛ս **Вавилов Н. Н.** Некоронованные короли красного Китая // СПб.: Карпе Дием, 2016, 208 էջ:

[19] Սի Ցզինպինի զեկույցի ամբողջական տեքստը կոմունիստական կուսակցության XIX համագումարում // Xinhua wang – http://russian.news.cn/2017-11/03/c_ 136726299.htm

[20] Նույն տեղում:

առնչվող փոփոխությունները շատ բանով հանգում են պետական վերահսկողության ամրապնդմանը «փափուկ ուժի» բովանդակության նկատմամբ, քաղաքական ու մշակութային բաղադրիչների փոխգործակցությանն ու փոխլրացմանը՝ առաջինի գերակայությամբ: Դրա հարվածային հզորությունը կախված է Չինաստանի բնակչության կողմից չինական ավանդական արժեքների և չինական յուրահատկությամբ կոմունիզմի արժեքների յուրացումից:

Ընդհանուր առմամբ, չինացի քաղաքական առաջնորդները դիտարկում են «փափուկ ուժի» հայեցակարգը որպես ընդհանուր մշակութային-քաղաքական գաղափարական հիմք ստեղծելու գործիք, որը կհամախմբի բնակչության լայն խավերին, ինչպես խանցիներին, այնպես էլ ազգային փոքրամասնություններին, ինչպես հարուստ մերձափնյա նահանգների բնակիչներին, այնպես էլ երկրի արևմտյան մասի բնակիչներին: «Ներքին փափուկ ուժի» մշակման ու տարածման հիմնական նպատակը «չինական գաղափարի»՝ բոլորի համար հասկանալի «չինական երազանքի» ստեղծումն է:

Ժամանակակից Չինաստանում «փափուկ ուժի» հայեցակարգի իրականացման տեսությունն ու պրակտիկան որոշ փոփոխություններ են կրել: ՉԺՀ նախագահ Սի Ցզինպինի ձեռքում իշխանության կենտրոնացմամբ պայմանավորված՝ պետության «փափուկ ուժը» դառնում է պետության կողմից կարգավորվող համընդգրկուն «չինական երազանքի» մասին գաղափարի խոսափողը: Չինական ղեկավարների ներկայիս հինգերորդ սերունդը, հասկանալով, որ տնտեսական արագ աճը ներքին քաղաքական ու սոցիալական կայունության բանալին է, ուշադրությունը կենտրոնացրել է տնտեսական զարգացման վրա՝ հայտարարելով տնտեսական կառուցվածքի փոփոխությունների, ինչպես նաև «Չինաստանի ներսում ու դրսում ներդաշնակ հասարակության» ամրապնդման մասին՝ շեշտադրելով գաղափարական-բարոյական շինարարությունը: Ընդգծվում էր, որ երկրի ներքին կյանքում «փափուկ ուժը» ունի նույնպիսի նշանակություն, ինչպիսին ունի «գլոբալ ներդաշնակ աշխարհի» կառուցումը, որը նպաստում է Չինաստանի խաղաղ զարգացմանը: ՉԺՀ կառավարությունը հանգել է «փափուկ» և «կոշտ» ուժերի ռեսուրսների զուգակցմանը, որտեղ առաջինը երկրորդի շարունակությունն է, ինչպես որ արտաքինը ներքինի շարունակությունն է: «Փափուկ ուժի» հայեցակարգը՝ ուղղված ինչպես «դեպի դուրս», այնպես էլ «դեպի ներս», կայունացնող գործոն է, որը հավասարակշռում է չինական հասարակության ներսում տարաձայնությունները և համախմբում այն, չեզոքացնում «Չինաստանի խաղաղ բարգավաճման» վերաբերյալ կասկածները:

Բանալի բառեր – *«փափուկ ուժ», մշակույթ, «մշակույթի փափուկ ուժ», արժեքներ, քաղաքական նորմեր, քաղաքական մշակույթ, հոգևոր և բարոյական դաստիարակություն*

ПАЙЛАК ЕНГОЯН – *Сущность китайской концепции «мягкой силы».* – Ключевым компонентом «мягкой силы» в современном Китае является культура. В середине 2000-х годов руководство КНР провозгласило курс на укрепление потенциала культуры как «мягкой силы», способной стать не только инструментом формирования у зарубежной аудитории позитивного отношения к стране, но также средством сплочения самого китайского народа. Особое внимание уделяется духовному воспитанию китайской нации, развитию патриотизма, коллективизма, укреплению в нации самоуважения, уверенности в себе и гордости за державу, превращению патриотического энтузиазма в практические действия, нацеленные на процветание Китая. Всё вместе это должно способствовать укреплению его позиций на международной арене. Среди китайских исследователей появились две школы «мягкой силы»: «культурная» и «политическая». Несмотря на различия двух этих подходов, у политической и интеллектуальной элиты КНР наблюдается стремление комбинировать политику и культуру в концепции «мягкой силы» и трансформировать «мягкую силу» внутри страны в экономическую, политическую и культурную силу. Также имеется понимание, что политика и культура дополняют одна другую и образуют совокупную мощь китайской «мягкой силы», где культура выступает внутренним ядром, а политика – инструментом трансляции культурного содержания.

Ключевые слова: *мягкая сила, культура, мягкая сила культуры, ценности, политические нормы, политическая культура, духовное и нравственное воспитание*

PAYLAK YENGOYAN – *The Essence of the Chinese "Soft Power" Concept.* – The key element of modern China's "soft power" is culture. In the mid-2000s the Chinese government declared a policy of strengthening the potential of cultural "soft power", which might be not only an instrument for forming a positive attitude towards the country on the foreign audience but also a way to mobilize Chinese people as well. Particular attention is paid to the spiritual education of the Chinese nation, the development of patriotism, collectivism, strengthening the nation's self-esteem, its self-confidence, the transformation of people's patriotic enthusiasm into practical actions aimed at the prosperity of China. This policy should help strengthen China's "soft power" and extend its influence on the international arena. Currently, two approaches to China's "soft power" have emerged among Chinese researchers: "cultural" and "political". However, despite the differences between them, the Chinese political and intellectual elite have an intention to combine politics and culture in the "soft power" concept and transform "soft power" inside the country into economic, political, and cultural power. Besides, there is an understanding that politics and culture complement each other and form the combined strength of China's "soft power", where culture is the core, and politics is the instrument, which translates the cultural content.

Key words: *"soft power", culture, "soft power of culture", values, political norms, political culture, spiritual and moral education*